USAID FROM THE AMERICAN PEOPLE

PH international ADVANCING SOCIETIES, CONNECTING PEOPLE

ICHD Մարդկային զարգացման միջազգային կենտրոն International Center for Human Development

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ

Համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման գործիքը և դրա կիրառման ուղեցույցը մշակվել է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ) կողմից:

Ծրագիրն իրականացնում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության հայկական մասնաճյուղի գլխավորած կոնսորցիումը՝ ՄԶՄԿ-ի, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն - ՍԻՎԻՏԱՍ-ի, ԿՏԱԿ-ի անդամակցությամբ: Ծրագիրը հնարավոր է դարձել ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ միջոցով:

Սույն ուղեցույցը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Ուղեցույցի բովանդակությունը բացառապես Մարդկային զարգացման միջազգային կենտրոնինն է, և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ NO. 72011122CA00001-P002

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 10

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐԸ և ՄԵԹՈԴԸ 15

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ 17

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ 18

- ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ 21

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 27

- ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ 27
- ԷԹԻԿԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ 30

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 32

- ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ 32
- ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 34

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ. ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ 39

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՕՐԻՆԱԿ 44

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՄԶՄԿ	ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿՏԱԿ	ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՀԿ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԻՄ	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ
ՏՀՏ	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
ԵԴԶ	ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ԿԳՄՍՆ	ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՀԿ	ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն իր խորին երախտագիտությունն է հայտնում փորձագետ Տաթևիկ Մարգարյանին և կենտրոնի փորձագետ Անի Մնացականյանին ուղեցույցի մշակման տարաբնույթ աշխատանքներն իրականացնելու և ուղեցույցը կազմելու համար:

Առանձնահատուկ շնորհակալություն Արմավիրի, Դիլիջանի, Մարտունու և Գորիսի խոշորացված համայնքների բոլոր այն երիտասարդներին, ովքեր մասնակցեցին համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման գործիքի փորձարկմանը: Նրանց կողմից տրամադրված տվյալների և նրանց կարծիքների շնորհիվ էր, որ գործիքը հղկվեց և լրամշակվեց:

Խորին շնորհակալություն ենք հայտնում նաև Արմավիրի և Մարտունու համայնքապետարանների, ինչպես նաև Արմավիրի զարգացման կենտրոնի, Մարտունու կանանց համայնքային խորհրդի, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոնի և «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի գործընկերներին՝ գործիքի փորձարկման գործընթացին օժանդակելու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև Մարինա Գալստյանին, Արմեն Բեժանյանին, Արսեն Սիմոնյանին, Աննա Եղոյանին, Վահե Խաչիկյանին և Զառա Լավչյանին գործիքի մշակման ընթացքում արժեքավոր փորձագիտական խորհրդատվության համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև ԱՄՆ ՄԶԳ-ին՝ համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման գործիքի մշակման հնարավորություն ընձեռելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020թ. ԿՈՎԻԴ-19 համաճարակը, արցախյան երկրորդ պատերազմն ու դրա հետևանքներն անդարձելի հետք են թողել հայաստանյան հասարակության հանրային և քաղաքական կյանքի վրա, ստեղծելով նոր իրողություններ և առաջադրելով նոր մարտահրավերներ, որոնց պայմաններում երիտասարդները շարունակում են ապրել, կրթվել, աշխատել, ստեղծագործել, արարել, զարգանալ և այսպիսով՝ իրենց ներդրումն ունենալ Հայաստանում ապագայի ձևավորման գործում: Այս իրողություններում ՀՀ կառավարությունը փորձում է ուրվագծել իր երիտասարդական քաղաքականությունը՝ երիտասարդների վրա ուղղակի ազդեցություն ունեցող այլ ոլորտային քաղաքականությունների բարեփոխմանը զուգահեռ: Այսպես, 2021թ. հանրային քննարկման դրվեցին ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագծերը: Սակայն 2022թ. այս մոտեցմանը փոխարինեց երիտասարդության մասին օրենքի նախագծի մշակումը: Քաղաքականության մշակման այս երկու գործընթացներում հստակորեն ամրագրվեց որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության բարելավման անհրաժեշտությունը, որն ամրագրված է նաև 2021-2026թթ. ՀՀ կառավարության ծրագրում և Հայաստանի Հանրապետության 2023-2025 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում: Զուգահեռաբար, 2021թ. ընդունվեց հանրակրթության պետական նոր չափորոշիչը, որով ևս արժևորվեց ուսումնառության գործընթացում սովորողների գործունությունը և ակտիվ ներգրավվածությունը թե՛ կրթական, թե՛ կառավարման գործընթացներում:

Առկա մարտահրավերները և զարգացումները հաշվի առնելով՝ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ) «Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում նախաձեռնեց համայնքային որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման գործիքի ձևավորման գործընթաց՝ համայնքային մակարդակում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման և այդ

տվյալների կիրառմամբ՝ ապացուցահեն համայնքային երիտասարդական քաղաքականության և ծրագրերի մշակման նպատակով:

Մշտադիտարկման գործիքը հնարավորություն կտա համայնքներում երիտասարդների առցանց հարցման միջոցով պարզել որոշումների կայացման գործընթացներում մասնակցության հնարավորությունների վերաբերյալ երիտասարդների իրազեկվածությունը, մասնակցության մակարդակը և դրսևորումները, մասնակցության հնարավորություններով և արդյունքներով երիտասարդների բավարարվածությունը:

Սույն փաստաթուղթը ներկայացնում է երիտասարդների մասնակցության մշտադիտարկման կազմակերպման ուղեցույցը, ներառյալ՝ մշտադիտարկման տեսական շրջանակը, գործընթացի կազմակերպման քայլերը՝ ընտրանքի ձևավորումը, մշտադիտարկման հարցաթերթի նկարագիրը և օրինակելի տարբերակը, հարցաթերթի տարածման մոտեցումները, մշտադիտարկման արդյունքների վերլուծության ու ներկայացման հիմնական սկզբունքները: Մշտադիտարկման մեթոդաբանության մշակման համար օգտագործվել են «Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված նախկին հետազոտությունները և միջազգային փորձագետ՝ Ջորջթաուն համալսարանի պրոֆեսոր և նույն համալսարանի Քաղաքացիական կրթության հետազոտական լաբորատորիայի տնօրեն Դիանա Օուենի կողմից իրականացված գրականության վերլուծությունը՝ որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման մոտեցումների և միջազգային լավագույն փորձի վերաբերյալ:

Տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին երիտասարդների մասնակցության մշտադիտարկման մեթոդ է ընտրվել առցանց հարցումը:

Մշտադիտարկման առցանց հարցաթերթի մշակման գործընթացում ներգրավվել են համայնքների ակտիվ երիտասարդներ, երիտասարդական ոլորտի փորձագետներ և կազմակերպություններ, համայնքապետարանների ներկայացուցիչներ՝ ոլորտում կուտակված գիտելիքը և փորձը արտացոլելու, մշակվող գործիքը հնարավորինս կիրառելի և առկա կարիքներին հարմարեցված դարձնելու նպատակով: Մշտադիտարկման հարցաթերթի նախնական տար-

բերակը փորձարկվել է 2023թ. հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի չորս խոշորացված համայնքներում և լրամշակվել է փորձարկման արդյունքների հիման վրա:

Ակնկալվում է, որ մշտադիտարկման իրականացումը կօգնի տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև տեղական ու միջազգային կազմակերպություններին առավել թիրախային դարձնել իրենց ջանքերը և ծրագրերը՝ ուղղված երիտասարդների դրական զարգացման չորս տիրույթներին՝ զարգացնելով նրանց ներքին և արտաքին ռեսուրսները, խթանելով գործունությունը, ապահովելով երիտասարդների ներդրումը համայնքային կյանքում և ստեղծելով այս ամենի համար անհրաժեշտ պայմաններ: Մասնավորապես, մշտադիտարկման արդյունքները կարող են օգնել տվյալ համայնքներում մասնակցային գործիքների արդյունավետության բարելավմանը, մասնակցության նոր ուղիների մշակմանն ու փորձարկմանը, իրազեկող և մասնակցությունը խրախուսող միջոցառումների նախաձեռնմանը:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մշտադիտարկման գործիքի մշակման տեսական հիմքում երիտասարդների դրական զարգացման շրջանակի հատվող, փոխկապակցված չորս տիրույթներն են, որոնք հանդիսանում են նաև «Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի հենքը: Այս տիրույթներն են՝ ներքին և արտաքին ռեսուրսները, գործունությունը, ներդրումը և նպաստող միջավայրը, որոնք միասին հիմք են դնում առողջ, արդյունավետ և ներգրավված երիտասարդության տեսլականին հասնելու համար[1]:

- **Ներքին և արտաքին ռեսուրսներ.** երիտասարդներն ունեն անհրաժեշտ ռեսուրսներ, հմտություններ և կարողություններ՝ ցանկալի արդյունքների հասնելու համար:

- **Գործունեություն.** երիտասարդները ընկալում են և կարող են օգտագործել իրենց կարողություններն ու ձգտումները՝ իրենց վերաբերյալ որոշումներ կայացնելու կամ դրանց վրա ազդելու, իրենց նպատակները սահմանելու համար, ինչպես նաև գործելու այդ որոշումների համաձայն՝ ցանկալի արդյունքների հասնելու համար:

- **Ներդրում.** երիտասարդությունը ներգրավված է որպես փոփոխությունների աղբյուր իրենց և իրենց համայնքների դրական զարգացման համար:

- **Նպաստող միջավայր.** երիտասարդները շրջապատված են այնպիսի միջավայրով, որը զարգացնում է նրանց կարողությունները և խթանում ակտիվությունը, աջակցում տեղեկատվության ու ծառայությունների հասանելիությանը, մասնակցության տարատեսակ հնարավորություններ ու միջոցներ ընձեռում:

Ըստ երիտասարդների դրական զարգացման շրջանակի՝ «երիտասարդների իմաստալից ներգրավվածությունը երիտասարդների և մեծահասակների միջև համապարփակ, մտադրված, փոխադարձ հարգանքի վրա հիմնված գործընկերություն է, որտեղ իշխանությունը բաշխվում է երիտասարդի և մեծահասակի միջև, յուրաքանչյուրի ներդրումը գնահատվում է, և երիտասարդների գաղափարները, տեսակետները, հմտությունները և ուժեղ կողմերը ինտեգրվում են այն ծրագրերի, ռազմավարությունների, քաղաքականության, ֆինանսավորման մեխանիզմների մշակման և իրականացման մեջ, ինչպես նաև այն կազմակերպությունների աշխատանքներում, որոնք ազդում են նրանց կյանքի, համայնքների, երկրների և ամբողջ աշխարհի վրա»[2]:

1. Positive Youth Development (PYD) Framework, Youth Power 2: Learning and Evaluation, https://www.youthpower.org/positive-youth-development-pyd-framework
2. Աղբյուրը՝ https://www.youthpower.org/youth-engagement-guide (դիտված՝ 08.09.2023)

Մշտադիտարկման գործիքի մշակման համար օգտագործվել են «Հայաստանի քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված թիրախային հետազոտությունների արդյունքները: Մասնավորապես, միջազգային փորձագետ Դիանա Օուենի կողմից իրականացվել է գրականության վերլուծություն՝ որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման առկա մոտեցումների և միջազգային լավագույն փորձի վերաբերյալ[3]: Ըստ այս վերլուծության արդյունքների՝

ա. մշտադիտարկման իրականացման համար անհրաժեշտ են երիտասարդների մասնակցության պրակտիկայի արդյունավետության բարձրացմանը միտված հստակ նպատակներ, համապատասխան թիրախներ և ցուցանիշներ, որոնք ամփոփված են փոփոխության տեսությունում (Theory of Change).

բ. մշտադիտարկումն առավել արդյունավետ է կազմակերպության և համայնքային մակարդակում, քանի որ այս մակարդակներում մշտադիտարկումը հնարավոր է իրականացնել ավելի սահմանափակ ռեսուրսներով և ամենակարևորը, երիտասարդների մասնակցության պրակտիկայում մշտադիտարկման արդյունքների վրա հիմնված փոփոխությունները կարող են ավելի արդյունավետ, արագ և տեսանելի լինել, քան պետական մակարդակում.

գ. հաշվի առնելով մշտադիտարկման թիրախային խմբի առանձնահատկությունները՝ մշտադիտարկման գործիքը պետք է լինի պարզ, հստակ և հնարավորինս հակիրճ:

Բացի այդ, ծրագրի շրջանակում իրականացվել է Հայաստանում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության համալիր գնահատում, որն անդրադարձել է Հայաստանում երիտասարդության վիճակագրական պատկերին, քարտեզագրել երիտասարդների դրական զարգացման շրջանակներում առկա՝ ընթացիկ քաղաքականությունները և պրակտիկան, ինստիտուցիոնալ շրջանակը, և որակական և քանակական մեթոդների միջոցով պարզել երիտասարդության ու մասնակցության սահմանումները՝ ըստ տարբեր շահագրգիռ կողմերի, երիտասարդների մասնակցության փորձն ու դիրքորոշումները՝ ըստ երիտասարդների դրական զարգացման չորս տիրույթների: Այս հետազոտության արդյունքները վկայում են, որ համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացին մասնակցելու մեխանիզմներն ու գործիքներն ավելի տեսանելի ու հասկանալի են երիտասարդների համար, իսկ մասնակցության փորձը տեղական մակարդակում շատ ավելի մեծ է, քան պետական մակարդակում[4]:

Մշտադիտարկման գործիքի մշակման համար հիմք է ծառայել նաև մի շարք այլ հեղինակների ու կազմակերպությունների կողմից մշակված՝ տարբեր մեկնաբանություններով, բայց նույն տրամա-

3. Owen, D. (2022). Armenia Civics for Engagement: Development of a Methodology and Instrument to Measure Youth Engagement in Decision-Making in Armenia. Literature Review
4. International Center for Human Development. (2022). Comprehensive Assessment of Youth Engagement in Decision-Making in Armenia

բանությանը հետևող մասնակցության սանդղակը[5], որտեղ ներկայացված են մասնակցության աստիճաններն ըստ ներգրավման ավելացման աստիճանի՝ անտեսումից մինչև քաղաքացիների լիակատար իրավազորում:

Երիտասարդների մասնակցության համատեքստում հաճախ օգտագործվում է Ռոջեր Հարթի՝ երեխաների մասնակցության սանդղակի՝ երիտասարդներին հարմարեցված տարբերակը: Այն ներկայացնում է մասնակցության հետևյալ աստիճանները՝

Աստիճան 8՝ Երիտասարդների կողմից նախաձեռնված, հրավիրված մեծահասակների հետ համատեղ որոշումների կայացում և իրականացում	Մասնակցության աստիճաններ
Աստիճան 7՝ Երիտասարդների կողմից նախաձեռնված և համակարգված որոշումների ընդունում, որտեղ մեծահասակները աջակցող դերում են	
Աստիճան 6՝ Մեծահասակների կողմից նախաձեռնված, համատեղ որոշումների ընդունում	
Աստիճան 5՝ Տեղեկացում և խորհրդակցություն	
Աստիճան 4՝ Տեղեկացում իրենց հատկացված դերի մասին	
Աստիճան 3՝ Իմիտացիա	Մասնակցության բացակայություն
Աստիճան 2՝ Դեկորացիա	
Աստիճան 1՝ Մանիպուլացիա	

Այսպիսով, այս աստիճանակարգում մասնակցության առավել կայացած դրսևորումները «չմասնակցությունից» և ապա մասնակցության պասիվ աստիճաններից (տեղեկատվության միակողմանի ստացում, ապա խորհրդակցություն) ենթադրում են անցում դեպի ավելի ակտիվ ներգրավվածություն՝ որոշումների համատեղ ընդունում և անգամ նախաձեռնում երիտասարդների կողմից: Ըստ այդմ, մշտադիտարկման հարցաթերթում ներառված են թե՛ պասիվ, թե՛ ակտիվ մասնակցության տեսակների վերաբերյալ հարցեր:

Մեկ այլ տեսական հիմք, որը հաշվի է առնվել մշտադիտարկման հարցաթերթը կազմելիս, «Տեղական և տարածաշրջանային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված Եվրոպական խարտիայից»[6] բխող RMSOS մոտեցումն է, որը կիրառվում է երիտասարդական մասնակցության համատեքստում: Այն ներառում է

5. IAP2 Spectrum of Public Participation, IAP2 – International Association of Public Participation, https://cdn.ymaws.com/www.iap2.org/resource/resmgr/pillars/Spectrum_8.5x11_Print.pdf
6. Revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life, Congress of Local and Regional Authorities of the Council of Europe, Council of Europe, March 2015, https://rm.coe.int/168071b4d6

հետևյալ հինգ բաղադրիչները[7].

- Մասնակցության իրավունքի սահմանում և պաշտպանություն,
- Մասնակցելու համար անհրաժեշտ միջոցների առկայություն,
- Մասնակցության տարածքի առկայություն,
- Մասնակցելու հնարավորությունների առկայություն,
- Մասնակցային գործընթացներում երիտասարդների ներգրավման աջակցություն:

Մշտադիտարկման գործիքի մշակման ընթացքում երիտասարդների մասնակցության վերաբերյալ նախորդ հետազոտությունների, ինչպես նաև վերոնշյալ՝ մշտադիտարկման մոտեցումների և միջազգային լավագույն փորձի վերլուծության մեջ դիտարկված միջազգային գործիքները համապատասխանեցվել են Հայաստանի համատեքստին: Երիտասարդների դրական զարգացման մոտեցման շրջանակներում մշակվել է համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության արդյունավետության բարելավման փոփոխության տեսության օրինակելի ձև, որը ներառում է այնպիսի ցուցանիշներ, որոնք յուրահատուկ են Հայաստանում երիտասարդների մասնակցության մշտադիտարկման համար և միևնույն ժամանակ համապատասխանում են երիտասարդների դրական զարգացման մոտեցմանը (տե՛ս *Հավելված 1*):

Մշտադիտարկման սույն գործիքը հասցեագրում է փոփոխության տեսությամբ ակնկալվող երկարաժամկետ արդյունքին հասնելու ընթացքը մշտադիտարկելու համար առաջարկված երկու ցուցանիշները՝ *«0.3. Երիտասարդների տեղեկացվածության մակարդակը իրենց համայնքում որոշումների կայացմանը մասնակցելու մեխանիզմների վերաբերյալ» և «0.4. Մասնակցությամբ բավարարվածության մակարդակը՝ երիտասարդները որքանով են բավարարված համայնքում որոշումների կայացմանը մասնակցելու իրենց փորձից»*[8]: Ըստ այդմ, մշտադիտարկման հարցաթերթում անդրադարձ է կատարվում մասնակցության առկա հնարավորություններին, հարթակներին, տրամադրվող աջակցությանը և համապատասխան միջոցների առկայությանը:

Հայաստանում որոշումների կայացման գործընթացում մասնակցության իրավունքը ամրագրված է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունքը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով: Ըստ այս օրենքի՝ համայնքի ինքնակառավարմանը մասնակցելու

7. Տեղական մակարդակում որոշումների կայացմանը երիտասարդների ներգրավման ուղեցույց, Զարուհի Լավչյան, Արեգ Թադևոսյան, https://escs.am/files/files/2023-03-03/2b08fd0679764736009a9c5b4d70ded8.pdf

8. Ուղեցույցում ներկայացված է ցանկալի փոփոխության տեսության օրինակելի ձև, որը յուրաքանչյուր համայնք կարող է համապատասխանեցնել երիտասարդության ոլորտում իր յուրահատուկ առաջնահերթություններին և ռեսուրսներին: Առաջարկվող մշտադիտարկման գործիքը վերաբերում է այն ցուցանիշներին, որոնց վերաբերյալ ապացուցողական հիմք ունենալու համար անհրաժեշտ է հավաքագրել առաջնային տվյալներ, մինչդեռ մյուս ցուցանիշների դեպքում մեծամասամբ արդեն իսկ առկա են երկրորդային տվյալներ և անհրաժեշտ է այդ տվյալներն ուղղակի համակարգել և վերլուծել:

իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ[9]: Հարցաշարի համար որպես հիմք ընդունվել են օրենքով սահմանված մասնակցության հնարավորությունները, ներառյալ՝ տեղեկատվության ստացումը համայնքային կայքի միջոցով, մասնակցությունը հասարակական նախաձեռնություններին և միավորներին, ավագանու նիստին հետևելու կամ ներկա գտնվելու հնարավորությունը, համայնքի ղեկավարի կողմից իրազեկման ու մասնակցության միջոցառումների կազմակերպումը, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ստեղծումը, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի և տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումների կամ քննարկումների կազմակերպումը:

9. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ընդունված՝ 2002 թվականի մայիսի 7-ին, վերջին փոփոխությունը՝ 2023 թվականի մարտի 22-ին, https://www.arlis.am/documentview.aspx?docid=176442, հոդված 11:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԸ

Առաջարկվող մշտադիտարկման նպատակն է վստահելի, հետևողական և պարբերական տվյալներ հավաքագրել համայնքում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության համար անհրաժեշտ նախադրյալների՝ գիտելիքի, կարողության և մասնակցելու ցանկության առկայության, ինչպես նաև տարածված պրակտիկայի վերաբերյալ, անմիջականորեն ներգրավելով երիտասարդներին, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև համայնքային հասարակական կազմակերպությունները հնարավորություն ունենան ապահովելու երիտասարդների ներգրավվածությունը հենց իրենց և ընդհանրապես համայնքին վերաբերող որոշումների կայացման գործընթացում՝ հիմնվելով երիտասարդների կարծիքների, դիտարկումների և առաջարկների վրա, ինչպես նաև հաշվի առնել մշտադիտարկման արդյունքները՝ երիտասարդներին միտված այնպիսի քաղաքականության և ծրագրերի մշակման համար, որոնք կնպաստեն երիտասարդների դրական զարգացմանը:

Մշտադիտարկման խնդիրն է պարզել (ա) համայնքում որոշումների կայացման գործընթացներում մասնակցության հնարավորությունների վերաբերյալ երիտասարդների իրազեկվածությունը, (բ) մասնակցության մակարդակը և դրսևորումները, ինչպես նաև (գ) մասնակցության հնարավորություններով և արդյունքներով երիտասարդների բավարարվածությունը՝ առաջնային տվյալներ հավաքագրելով փոփոխության երկարաժամկետ արդյունքի վերոնշյալ երկու կատարողական ցուցանիշների վերաբերյալ:

Մշտադիտարկման մեթոդը առցանց հարցումն է, որը կարող է իրականացվել նպատակային լսարանի շրջանում հարցման հղումը հնարավորինս լայն տարածելու և պատասխաններ հավաքագրելու միջոցով: Այս մեթոդն ընտրվել է՝ ելնելով թե՛ գրականության վերլուծությունից և թե՛ գործնական նկատառումներից: Նախ, առցանց հարցումը հնարավորություն է տալիս տվյալներ հավաքել երիտասարդների լայն շրջանակից՝ ապահովե-

լով նաև տարբեր սոցիալական խմբերի մասնակցությունը և հնարավորինս ներառելով նրանց, ովքեր համեմատաբար դժվար հասանելի են և/կամ խոցելի: Այսպես, Հայաստանում ինտերներտային կապի մատչելիությունը գյուղական համայնքներում տնային տնտեսության որևէ անդամին մոտ 73% է, քաղաքային համայնքներում՝ 82%, իսկ ինտերներտից օգտվում է 15-24 տարեկան երիտասարդների ավելի քան 86%-ն[10]: Առցանց գործիքները ներկայիս երիտասարդության համար համեմատաբար դյուրամատչելի և հեշտ հասանելի են՝ ի տարբերություն մեծահասակների: Հետազոտության թիրախ խումբ հանդիսացող երիտասարդները հաճախ հմտորեն օգտագործում են թվային գործիքները՝ ինֆորմացիա ստանալու, հաղորդակցվելու, ինքնարտահայտման համար: Ավելին, 21-րդ դարում թվային մասնակցության ծավալները հետևողականորեն աճում են, ի հակադրություն ավելի ավանդական մասնակցության ձևերի [11]: Առցանց հարցումը նաև անանուն մնալու հնարավորություն է տալիս և ճկունություն՝ լրացման ժամանակի ու տեղի առումով:

Վերջապես, կարևոր է, որ տվյալների հավաքագրումը լինի հնարավորինս հեշտ իրագործելի, որպեսզի հնարավոր լինի ապահովել տվյալների հավաքագրման շարունակականությունը՝ առանց զգալի ծախսերի, իսկ առցանց հարցման կազմակերպումն ավելի հավանական է սահմանափակ և անգամ սուղ ռեսուրսների պայմաններում, ի տարբերություն հարցման այլ տեսակների: Մշտադիտարկման գործընթացը չպետք է ավելորդ բեռ դնի այն իրականացնողների կամ մասնակիցների վրա, ուստի առցանց տարբերակն առավել արդյունավետ կլինի այս առումով՝ թույլ տալով օգտագործել տվյալների հավաքագրման և ամփոփման ավտոմատացված համակարգեր: Նախատեսվում է, որ առաջարկված մեթոդաբանությամբ հարցումը հետագայում պարբերաբար կկազմակերպվի ՏԻՄ-երի, տեղական ՔՀԿ-ների և/կամ այլ կազմակերպությունների կողմից, որը թույլ կտա հետևել երիտասարդների մասնակցության դինամիկային ժամանակի ընթացքում:

10. ՀՀ վիճակագրության կոմիտե. (2022). Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2022. Ոչ նյութական աղքատություն. https://armstat.am/file/article/poverty_2022_a_4.pdf (դիտված՝ 08.09.2023)
11. Cho, A., Byrne, J., & Zoe, P. (2020). Digital Civic Engagement by Young People. In UNICEF Office of Global Insight and Policy (Issue February). https://shorturl.at/ltDKM (դիտված՝ 07.09.2023)

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆՏՐԱՆՔԸ

Մշտադիտարկման թիրախային բնակչությունը խոշորացված համայնքներում առնվազն 12 ամիս բնակվող 16-ից 30 տարեկան երիտասարդներն են[12], որոնք չեն հանդիսանում տվյալ համայնքի ավագանու կամ համայնքապետարանի աշխատակազմի անդամ:

Նախատեսվում է, որ մշտադիտարկման համար ընտրանքը կհավաքագրվի ըստ հասանելիության (convenience sampling), քանի որ առցանց հարցման դեպքում հնարավոր չէ վերահսկել հարցվողների կազմը: Միևնույն ժամանակ, հնարավորինս բազմակողմանի պատկեր ստանալու, ինֆորմացիային նվազ հասանելիություն ունեցող խմբերին ներգրավելու և կարծիքի արտահայտման հնարավորություն տալու համար ցանկալի է իրականացնել նաև հարցվողների նպատակային հավաքագրում՝ հետևյալ սկզբունքները ապահովելու միտումով.

- **սեռատարիքային բաշխում՝** ներառել բոլոր խմբերի ներկայացուցիչներին (16-20, 21-25, 26-30 տարիքային խմբերի իգական ու արական սեռ).
- **բնակավայրերի ընդգրկում՝** հնարավորինս ներառել տվյալ խոշորացված համայնքի գյուղական ու քաղաքային, կենտրոնական ու համեմատաբար հեռավոր բնակավայրերը.
- **հասանելիություն՝** հնարավորինս ներառել այն երիտասարդներին, որոնք համեմատաբար քիչ հասանելիություն ունեն համացանցին.
- **տարբեր սոցիալական խմբեր՝** հնարավորինս ներառել հասարակական ու քաղաքացիական ակտիվության դրսևորումներ չունեցող, պակաս տեսանելի, ինչպես նաև խոցելի խմբեր (հաշմանդամություն ունեցող անձինք, ազգային փոքրամասնություններ, սոցիալապես խոցելի ընտանիքներ և այլն) ներկայացնող երիտասարդների:

Հարկ է ընդգծել, որ մշտադիտարկման ընտրանքը որևէ կերպ չի հավակնելու ներկայացուցչական լինել: Առցանց հարցման մեթոդը իր առավելություններով հանդերձ սահմանափակում է ներկայացուցչական ընտրանք ունենալու հնարավորությունը, որը հատկապես

12. Տարիքային սանդղակը սահմանվել է՝ հաշվի առնելով ՏԻՄ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարմանը 16 տարեկանից սկսած բնակիչների մասնակցության իրավունքը և ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության վերջին ռազմավարության մեջ սահմանված տարիքային խումբը:

կարող է դրսևորվել հարցմանը համացանցին հասանելիություն ունեցող և ակտիվ երիտասարդների գերակշիռ մասնակցությամբ: Մշտադիտարկման հետագա իրականացման ժամանակ հարցման նախաձեռնողները պետք է գիտակցեն, որ հարցման արդյունքում հնարավոր չի լինի ստանալ տվյալ համայնքի ողջ երիտասարդության պատկերը կամ կարծիքը. հարցումը զուտ հնարավորություն կտա վերհանել տվյալ համայնքում երիտասարդների իրազեկվածության, մասնակցության դրսևորումների, մասնակցության հնարավորությունների վերաբերյալ գնահատականների որոշակի միտումներ, խնդիրներ ու առաջարկներ:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐ

Հարցաթերթը (տե՛ս Հավելված 2) մշակվել է՝ հիմք ընդունելով միջազգային փորձագետ Դիանա Օուենի կողմից մշակված հարցաշարը, որտեղ հարցեր են ներառվել ըստ երիտասարդների դրական զարգացման չորս տիրույթների՝ կենտրոնանալով մասնակցության հնարավորությունների վերաբերյալ երիտասարդների իրազեկվածության ու բավարարվածության հարցերի վրա:

Ստորև ներկայացված են հարցաթերթի հարցերը՝ ըստ դրանց նկարագրի և երիտասարդների դրական զարգացման տիրույթների:

Հարցերի նկարագիր	Հարց N	Երիտասարդների դրական զարգացման տիրույթ
(1) Տեղեկությունների հասանելիության և ՏԻՄ հետ հաղորդակցության միջոցների, մասնակցության համար կարողությունների և գիտելիքների վերաբերյալ հարցեր	4-8	Ներքին և արտաքին ռեսուրսներ
(2) Համայնքում մասնակցության հնարավորություն ընձեռող միջոցառումներին, համայնքում գործող կազմակերպությունների աշխատանքներում, ՏԻՄ ընտրություններում և աշխատանքներում մասնակցության մասին հարցեր	9-12	Գործունություն, ներդրում
(3) Ընդհանուր առմամբ համայնքում երիտասարդների մասնակցության և դրանց խոչընդոտող հանգամանքների մասին հարցեր	13-16	Նպաստող միջավայր
(4) Ժողովրդագրական հարցեր	1-3, 17-23	-

Հարցաթերթը հիմնականում ներառում է **փակ** և **կիսափակ** հարցեր՝ պատասխան-ների տարբերակների և գնահատման սանդղակների օգտագործմամբ, որպեսզի հարցվողների համար լրացման ընթացքը հեշտ ու արագ լինի, իսկ հարցումը հնարավորինս լիարժեք լրացված պատասխաններ ապահովի: Կիսափակ հարցերի դեպքում ներկայացված տարբերակներից բացի տրվում է նաև այլ պատասխան ներկայացնելու հնարավորություն՝ համապատասխան պատուհանում տեքստը լրացնելու հնարավորությամբ: Հարցաթերթում կա նաև **բաց** հարց՝ երիտասարդների մասնակցության բարելավման ուղղությամբ առաջարկների վերաբերյալ, որի պատասխանը հարցվողները լրացնում են իրենց ձևակերպմամբ՝ ըստ ցանկության:

Հարցաթերթի հարցերը հիմնականում ներկայացված են հարցերի հետևյալ տեսակներով

- **մենյու-հարցեր**, երբ առաջարկված պատասխաններից հարցվողը կարող է ընտրել իր համար կիրառելի բոլոր տարբերակները (օրինակ, հարց 4, 6, 9, 10 և այլն):
- **այլընտրանքային հարցեր**, երբ ներկայացված պատասխաններից հնարավոր է ընտրել միայն մեկ տարբերակ (օրինակ, հարց 5, 7, 11 և այլն):
- **հարց-մատրիցա**, երբ մի հարցի ներքո մի շարք տարբերակներ են ներկայացված, որոնցից յուրաքանչյուրի համար հարցվողը պետք է ընտրի համապատասխան պատասխանը (օրինակ, հարց 8 և 13):

Հարցաթերթը կարող է ձևափոխվել մշտադիտարկումն իրականացնողի կողմից՝ առանձին հարցերը մանրամասնելու, պատասխանների տարբերակներն ավելացնելու կամ այլ միջոցներով՝ ըստ տվյալ համայնքի առաջնահերթությունների, հետաքրքրությունների և կարիքների: Օրինակ, մենյու հարցերը կարելի է դարձնել հարց-մատրիցա՝ պատասխանի յուրաքանչյուր տարբերակի համար առաջարկելով ընտրել մի քանի տարբերակ (*տես օրինակները հաջորդ էջերում*):

Ա. մասնակցության հաճախականություն.

Օրինակ՝

6. Վերջին 12 ամսվա ընթացքում Ձեր համայնքի համայնքապետարանի ներկայացուցիչների (համայնքապետի, ավագանու, վարչական ղեկավարի կամ համայնքապետարանի աշխատակազմի) հետ հաղորդակցվելու համար նշված միջոցները որքա՞ն հաճախ եք օգտագործել (նշում կատարել բոլոր տողերի համար):				
	Երբեք	**Հազվադեպ**	**Հաճախ**	**Միշտ**
1) Դեմառդեմ հանդիպում				
2) Հանրային միջոցառումներ				
3) Հեռախոսային կապ				
4) Թղթային նամակներ կամ դիմումներ				
5) Սոցիալական մեդիայում (օրինակ ֆեյսբուքում) թողած մեկնաբանություն կամ հաղորդագրություն				
6) Էլեկտրոնային նամակագրություն (e-mail, e-request հարթակ, համայնքային կայք և այլն)				
7) Չեմ հաղորդակցվել				
8) Այլ (նշել)				

Բ. գնահատման ասպեկտներ

15. Համաձա՞յն եք, որ ստորև նշվածները ձեր խոշորացված համայնքում տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացմանը երիտասարդների ակտիվ մասնակցության հիմնական խոչընդոտներն են (գնահատել յուրաքանչյուր դատողությունը 1-5 սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է՝ բոլորովին համաձայն չեմ, 5-ը՝ լիովին համաձայն եմ):					
	1	2	3	4	5
1) Երիտասարդները չգիտեն, թե ինչպես կարող են մասնակցել					
2) Երիտասարդները չունեն մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիք ու կարողություն					
3) Երիտասարդները չունեն բավարար հետաքրքրություն և մոտիվացիա					
4) Երիտասարդները բավարար ժամանակ չունեն մասնակցության համար					
5) Երիտասարդները չեն կարողանում համախմբվել որևէ հարցի շուրջ					
6) Երիտասարդները վստահ չեն, որ իրենց մասնակցությունը իմաստ կամ արդյունք կունենա					
7) Երիտասարդների համար չկան կարծիք արտահայտելու, խնդիրները բարձրաձայնելու, մասնակցելու՝ իրենց համար հասանելի կամ իրենց կարիքներին համապատասխանող հարթակներ, հնարավորություններ					
8) Երիտասարդները չեն վստահում համայնքային կառույցներին և կամ կազմակերպություններին					
9) Երիտասարդները բավարար աջակցություն, ուղղորդում և կամ խրախուսում չեն ստանում մեծերի կողմից					

10) Համայնքում չկան համապատասխան ենթակառուցվածքներ (տրանսպորտ, ճանապարհ, լուսավորություն և այլն)					
11) Որոշում կայացնողները լուրջ չեն ընդունում կամ անտեսում են երիտասարդների ձայնը					
12) Ընտանիքի անդամները կամ մեծերը խոչընդոտում կամ արգելում են երիտասարդներին մասնակցել համայնքային հարցերի լուծմանը կամ իրենց կարծիքը արտահայտել					
13) Այլ (նշել)					

Կարելի է նաև ավելացնել բաց հարցերը՝ որոշ հարցերի վերաբերյալ խնդրելով ներկայացնել օրինակներ, մեկնաբանություններ: Տվյալ համայնքի առանձնահատկություններից ելնելով՝ կարելի է նաև ավելացնել կամ վերանայել առանձին հարցերի պատասխանների առաջարկվող տարբերակները: Հարցաթերթի ծավալը ավելացնելիս հարկավոր է հաշվի առնել հարցաթերթի լրացման ժամանակի հնարավոր ավելացումը և հավաքագրված պատասխանների նվազման ռիսկը՝ հավասարակշռելով այն լրացուցիչ հարցերից ստացած օգուտի հետ: Խորհուրդ է տրվում հարցաթերթում ցանկացած փոփոխություն կատարելուց առաջ խորհրդակցել համապատասխան մասնագետ(ներ)ի՝ մասնավորապես սոցիոլոգի և ՏՀՏ մասնագետի հետ:

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

Մշտադիտարկման գործիքի փորձարկման համար օգտագործվել է KoboToolbox հարթակը [13], որը ստեղծվել է մարդասիրական կազմակերպությունների համար, սակայն բաց է տվյալների հավաքագրման տարբեր նախաձեռնությունների նպատակով օգտագործման համար: Այս հարթակի միջոցով կարելի է ստեղծել հարցաթերթեր, հավաքագրել պատասխաններ, հետևել պատասխանների հավաքագրման ընթացքին, ստանալ պատասխանները՝ գրաֆիկական տեսքով, ինչպես նաև ներբեռնել ստացած տվյալները տարբեր ձևաչափերով (Excel, SPSS կամ GIS ծրագրերով վերլուծելու համար): Հարթակը ունի նաև KoboCollect Android հավելված, որը թույլ է տալիս տվյալների հավաքագրում դեմառդեմ՝ գրանցված տվյալները պահելով սարքում, մինչև հասանելի լինի ինտերնետ կապը, և տվյալները կուղարկվեն սերվերին: Սա հնարավորություն է տալիս տվյալներ հավաքագրել համացանցի սահմանափակում ունեցող տարածքներում: Բացի KoboCollect հավելվածից, KoboToolbox-ը նաև թույլ է տալիս առցանց և անցանց

13. https://www.kobotoolbox.org

տվյալների հավաքագրում համացանցային ցանկացած դիտարկչի (browser) միջոցով և կարող է աշխատել ցանկացած բջջային հեռախոսի, պլանշետի կամ համակարգչի վրա [14]:

KoboToolbox-ի միջոցով հարցում իրականացնելու համար հարկավոր է.

1. Գրանցվել հարթակում՝ լրացնելով հարցումն իրականացնողի տվյալները www.kf.kobotoolbox.org/accounts/signup/ էջում:



2. Գրանցվելուց հետո հարկավոր է ստեղծել նոր հարցաթերթ՝ սեղմելով «New» կոճակի վրա:



14. What is KoboToolbox, https://support.kobotoolbox.org/welcome.html

3. «New» կոճակը սեղմելուց հետո բացվում է պատուհան, որտեղ պետք է ընտրել «XLS» ֆորմատի ֆայլի հղումով վերբեռնման տարբերակը, որպեսզի վերբեռնեք մշտադիտարկման հարցաթերթի հղումը՝ https://t.ly/d4Kah



4. Մշտադիտարկման հարցաթերթը վերբեռնումից հետո անհրաժեշտ է կատարել որոշակի փոփոխություններ, որպեսզի այն համապատասխանի այն համայնքին, որտեղ իրականացվում է մշտադիտարկումը, ինչպես նաև նշվի այն ժամանակահատվածը, որի ընթացքում նախատեսվում է իրականացնել հարցումը:

4.1. Մշտադիտարկման հարցաթերթին տալ անվանում, օրինակ՝ *«Համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության մշտադիտարկում. Գորիս համայնք».*

- Քայլ 1. Սեղմել «Settings» կոճակի վրա
- Քայլ 2. Գրել հարցաթերթի անվանումը «Project Name» դաշտում
- Քայլ 3. Պահպանել՝ սեղմելով «Save Changes» կոճակը



4.2. Հարցաթերթի անվանումը պահպանելուց հետո անհրաժեշտ է մուտք գործել հարցաթերթ՝ սեղմելով «Form» կոճակի վրա, այնուհետև գրչի տեսքով նշանի վրա:



Այդ դեպքում կբացվի հարցաշարի վրա փոփոխություններ կատարելու հարթակը: Խորհուրդ է տրվում՝ ստորև տեքստը նախապես համապատասխանաբար խմբագրել և միանգամից տեղադրել հարթակի համապատասխան դաշտում, քանի որ դաշտը հնարավորություն չի տալիս տեքստը ամբողջությամբ տեսնել: Այդպիսով հնարավոր կլինի խուսափել սխալներից:

Ներածություն

Շնորհակալություն ենք հայտնում հարցմանը մասնակցելու Ձեր պատրաստակամության համար: Այս հարցման նպատակն է մշտադիտարկել *(համայնքի անունը)* համայնքում երիտասարդների մասնակցության իրավիճակը, առկա խնդիրները ու հնարավորությունները: Հարցման արդյունքները կօգտագործվեն որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության բարելավման վերաբերյալ համայնքապետարանին առաջարկներ մշակելու համար:

Հարցումն իրականացվում է *(համայնքապետարանի կամ կազմակերպության անվանումը)* կողմից:

Հարցմանը կարող են մասնակցել 16-30 տարեկան երիտասարդներ, որոնք տվյալ համայնքում (կամ դրա կազմում ներկայումս ներառված բնակավայրում) բնակվում են ***առնվազն 12 ամիս****: Հարցումը* ***նախատեսված չէ*** *համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակիցների համար:*

Հարցումն անանուն է՝ բոլոր պատասխանները ընդհանրական ձևով կամփոփվեն մշտադիտարկման զեկույցում: Հարցման արդյունքները չեն փոխանցվում որևէ այլ կողմի: Հարցաթերթի լրացումը Ձեզանից կպահանջի մոտ 10-15 րոպե: Ձեր անկեղծ և մանրամասն պատասխանները կօգնեն մեզ առավել լիարժեք պատկերացում ստանալ երիտասարդների մասնակցության վերաբերյալ և արդյունավետ առաջարկներ մշակել իրավիճակի բարելավման ուղղությամբ: Ցանկացած պահի Դուք կարող եք ընդհատել Ձեր մասնակցությունը:

Հարցումը բաց է լրացման համար մինչև *(նշել պատասխանների հավաքագրման վերջնաժամկետը)*:

Կանխավ շնորհակալ ենք Ձեր մասնակցության և համագործակցության համար:

Հարցաթերթը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄՀՄԿ) կողմից՝ «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում:

Տեքստը դաշտում տեղադրելու համար, պետք է սեղմել դաշտի վրա, այնուհետև ստեղնաշարի վրա սեղմել «Ctrl+A» և «Delete»: Այսպիսով դաշտում առկա տեքսը ամբողջությամբ կջնջվի և հնարավորություն կտրվի տեղադրելու տեքստի խմբագրված տարբերակը՝ «պատճենել-տեղադրել» պարզ գործողության միջոցով:



Տեքստը տեղադրելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Save» կոճակը՝ փոփոխությունները պահպանելու նպատակով: Խորհուրդ չի տրվում կատարել որևէ այլ փոփոխություն այս հարթակում, առանց S<S կամ այլ համապատասխան մասնագետի աջակցության:

5. Բոլոր նախապատրաստական գործողությունները իրականացնելուց հետո պետք է հարցաթերթն «ակտիվացնել»: Այդ գործողության համար անհրաժեշտ է սեղմել «Deploy» կամ «Redeploy» կոճակը:



6. Մշտադիտարկման հարցաթերթը տարածելու համար համապատասխան հղումը հնարավոր է ստանալ՝ սեղմելով «Copy» կոճակի վրա:



7. Մշտադիտարկման հարցաթերթի առցանց տարբերակը տեսնելու համար հարկավոր է սեղմել «Open» կոճակը:



ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ՀԱՐՑԱԹԵՐԹԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Քանի որ առցանց հարցման մեթոդով իրականացվող մշտադիտարկման ընտրանքը ներկայացուցչական չի կարող լինել, հարցաթերթի հնարավորինս լայն տարածումը համայնքի երիտասարդության շրջանում կօգնի առավել բազմազան և համընդգրկուն պատկեր ստանալ երիտասարդության մասնակցության փորձի ու կարծիքների վերաբերյալ: Ուստի հարցումը տարածելու համար անհրաժեշտ է բազմազան մեթոդներ կիրառել:

Հարցաթերթի տարածման և երիտասարդների հնարավորինս լայն շրջանակի կողմից լրացման գործում համայնքապետարանները կարող են դիմել տեղական հասարակական կազմակերպություններին, համայնքային կենտրոններին, երիտասարդների հետ աշխատող եկեղեցական թեմերի, համայնքի ակտիվ երիտասարդների ու նախաձեռնող խմբերի, որոնք կարող են օգտագործել իրենց ցանցերը՝ հարցումը տարածելու համար: Ստորև մի քանի խորհուրդ ներկայացնենք՝ հնարավորինս լայն շրջանակում հարցման տարածումը ապահովելու համար:

- Հարցմանը մասնակցելու հրավերի մեջ օգտագործեք աչքի ընկնող, գրավիչ տառատեսակներ և գրաֆիկա, ինչպես նաև խուսափեք տեխնիկական լեզվից:
- Հարցման հրավերն ուղարկեք համայնքապետարանի կայքի նորություններին բաժանորդագրված էլեկտրոնային հասցեների ցանկերով:
- Հարցման հրավերը տեղադրեք համայնքապետարանի կայքի նորություններում, համայնքապետարանի կայքի «Հարցում» բաժնում և սոցիալական ցանցերի էջերում:

Օրինակ՝

- Հարցման հղումը՝ հրավերի տեքստի հետ միասին, ուղարկեք տեղական հասարակական և այլ կազմակերպություններին՝ նշելով, որ նրանց հնարավորություն կտրվի ծանոթանալ հարցման արդյունքներին և օգտագործել դրանք իրենց հետագա գործունեության համար:
- Հարցման հղումը տարածելիս՝ նշեք հարցման թիրախ մասնակիցներին (տվյալ համայնքում առնվազն 12 ամիս բնակվող 16-ից 30 տարեկան երիտասարդներ), որպեսզի խուսափեք հետագա խնդիրներից և այլ խմբերի կողմից հարցաթերթի լրացումից: Այս մանրամասները պետք է ներառվեն հրավերի և տարածման խնդրանքով ուղարկվող հաղորդագրությունների մեջ՝ մինչև հարցման հղումը նշելը:
- Հարցմանը մասնակցելու մասին հրավերը կարելի է տարածել նաև տպագիր

հայտարարությունների (պաստառների կամ թռուցիկների) միջոցով՝ դրանք տեղադրելով համայնքի հայտարարությունների տախտակին, այլ տեսանելի վայրերում, ինչպես նաև համայնքում առկա ուսումնական հաստատություններում և այն աշխատավայրերում, որտեղ աշխատակիցների մեջ զգալի թիվ են կազմում երիտասարդները, օրինակ՝ ՏՀՏ ընկերությունները: Տպագիր նյութերը կօգնեն հիշեցնել հարցման կարևորության մասին: Դրանք կարող են լինել շատ համառոտ՝ հղում տալով համայնքապետարանի կայքին կամ սոցիալական ցանցի էջին, որտեղ կարող են գտնել ավելի մանրամասն տեղեկատվություն հարցման վերաբերյալ:

- Հարցումը կարելի է կազմակերպել այնպիսի ժամանակահատվածում, երբ որոշումների կայացմանը մասնակցելու որոշակի հնարավորություններ են ընձեռվել համայնքապետարանի կողմից, օրինակ՝ նախատեսվում են լսումներ համայնքի զարգացման ծրագրի կամ սուբվենցիոն ծրագրերի շուրջ, կամ այլ կազմակերպությունների կողմից երիտասարդների ակտիվությունը խթանող միջոցառումներ են իրականացվում, և հարցման մասնակցությունը կարող է խթանել հետաքրքրությունը մասնակցային գործընթացների նկատմամբ, և հակառակը՝ տարբեր միջոցառումների մասնակցող երիտասարդները ավելի մեծ հետաքրքրությամբ կլրացնեն հարցաթերթը:
- Հնարավորության դեպքում խրախուսեք հարցվողներին՝ նշելով, որ հարցման արդյունքները ընդհանրացված ձևով կհրապարակվեն համայնքապետարանի կամ հարցումը տարածող կազմակերպության կայքում (սոցիալական ցանցերի էջում): Կարելի է նաև խաղարկություն իրականացնել, օրինակ, ամեն 10-րդ կամ 50-րդ հարցվողի համար խորհրդանշական նվեր նախատեսելով: Այս դեպքում, հարցման անանունությամբ պայմանավորված, հարցաթերթում պետք է ավելացնել լրացուցիչ կետ՝ խնդրելով հարցման մասնակցին խաղարկությանը մասնակցելու ցանկության դեպքում լրացնել իր էլեկտրոնային հասցեն և/կամ հեռախոսահամարը, խաղարկության դրական արդյունքի դեպքում նրա հետ կապ հաստատելու համար:

Հարցման մասին տեղեկատվությունը տարածելիս նպատակահարմար կլինի

հարցման համար որոշակի ժամանակահատված սահմանել, որպեսզի խթանել հարցման լրացումը և հնարավորություն տալ հավանական հարցվողներին պլանավորել իրենց գործողությունները: Հարցման համար ողջամիտ ժամկետ կարող է լինել երեք շաբաթը կամ մեկ ամիսը: Սակայն պատասխանների սղության դեպքում իրականացնող կողմը կարող է որոշում կայացնել երկարաձգել հարցման ժամկետը, որը լրացուցիչ առիթ կլինի հարցման մասին ինֆորմացիան նորից տարածելու և նոր պատասխաններ խթանելու համար:

Էլեկտրոնային փոստով հրավերն ուղարկելիս, որպես կանոն, պատասխանները ստացվում են առաջին երեք կամ չորս օրվա ընթացքում: Ուստի յոթից տասը օր հետո կարելի է հիշեցումներ ուղարկել: Սոցիալական ցանցերում հարցման հրավերը կարելի է ավելի հաճախ թարմացնել, քանի որ տարբեր մարդիկ տարբեր հաճախականությամբ են այցելում սոցիալական ցանցեր և հաճախակի թարմացման դեպքում ավելի մեծ է հավանականությունը, որ նրանք կտեսնեն հրավերը և հենց այդ պահին կլրացնեն հարցումը:

ԷԹԻԿԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Մշտադիտարկման ընթացքում կարևոր է պահպանել հետազոտական էթիկայի սկզբունքները՝ հարցվողներին չվնասելու, անանունության ապահովման, հարգանքի և արդարության մոտեցման միջոցով: Օրինակ՝ չվնասելու և անանունության սկզբունքների ապահովման համար տվյալների ներկայացման ժամանակ հարկավոր է չհրապարակել այն տվյալները, որոնք կարող են որևէ հարցվողին ճանաչելի դարձնել՝ որոշակի յուրահատուկ բնութագրերի շնորհիվ, որոնք, օրինակ, տվյալ համայնքում հազվադեպ են հանդիպում: Արդարության սկզբունքը պահպանելու համար հարկավոր է հավասար հնարավորություններ տալ տարբեր բնակավայրերի ու սոցիալական խմբերի երիտասարդներին՝ հարցաթերթը լրացնելու համար, օրինակ՝ կարելի է որոշակի ժամերին համակարգիչ նախատեսել համայնքապետարանի, որևէ հասարակական կազմակերպության կամ ուսումնական հաստատության շենքում՝ համացանցին հասանելիություն չունեցող երիտասարդներին հարցմանը մասնակցելու հնարավորություն տալու նպատակով: Բացի այդ, հարցվողների համար անհրաժեշտ է հասանելի դարձնել մշտա-

դիտարկման հիմնական արդյունքները և ցույց տալ, թե ինչպես են դրանք օգտագործվել տեղական ինքնակառավարման մարմինների կամ այլ կազմակերպությունների կողմից՝ երիտասարդների մասնակցության բարելավման իրենց ծրագրերում կամ միջոցառումներում: Վերջապես, հստակ պետք է նշել, որ հարցմանը մասնակցությունը կամավոր սկզբունքով է, ուստի հարցվողները պետք է իմանան, որ ցանկացած ժամանակ կարող են հրաժարվել իրենց մասնակցությունից (*տե՛ս Հարցաթերթում (Հավելված 2) համապատասխան նշումը*):

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հարցումը էլեկտրոնային հարթակներով իրականացնելու դեպքում, որպես կանոն, յուրաքանչյուր հարցի պատասխանները և դրանց գրաֆիկական պատկերները ներկայացվում են հարթակներում ինքնաշխատ կերպով: Պատասխանները կարելի է արտահանել նաև «Էքսել» և տվյալների վերլուծության այլ ծրագրերով, որից հետո կարելի է մշակել դրանք մասնագետի օգնությամբ:

Տվյալների մշակման առավել պարզ տարբերակներից են պարզ հաճախականությունները և խաչաձև աղյուսակները: Մշտադիտարկման հիմնական արդյունքները ստանալու համար այս երկու տարբերակները կարող են բավարար լինել:

Պարզ հաճախականությունների դեպքում յուրաքանչյուր հարցի համար առանձնացվում են ստացած պատասխանների հաճախականությունները՝ քանակական կամ տոկոսային հարաբերակցության պատկերմամբ: Այսպես, պիլոտային հարցման ընթացքում տեղեկատվության ստացման աղբյուրների վերաբերյալ հարցի հետևյալ պատասխաններն են ստացվել Մարտունի համայնքի համար՝



Value	Frequency	Percentage
Համայնքապետարանի սոցիալական ցանցերի էջեր (Ֆեյսբուք, Ինստագրամ և այլն)	27	51.92
Հարևաններ, ընկերներ, ընտանիքի անդամներ	19	36.54
Երիտասարդական կենտրոն, հասարակական կազմակերպություններ, համայնքային միջոցառումներ	15	28.85
Համայնքապետարանի Ներկայացուցիչներ	12	23.08
Համայնքապետարանի կայք	9	17.31
Աշխատավայր	4	7.69
Կրթական հաստատություն	4	7.69
Լրատվամիջոցներ (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր, լրատվական կայքեր)	4	7.69
Համայնքապետարանի կողմից հայտարարությունների տախտակին փակցված նյութեր	2	3.85

Տվյալ դեպքում համակարգը պատասխանները դասավորել է ըստ հաճախականության նվազման: Թվերի առաջին սյունակում նշված է տվյալ տարբերակը ընտրած հարցվողների թիվը, երկրորդ սյունակում՝ հարցվողների ընդհանուր քանակի նկատմամբ այդ թվի հարաբերակցությունը:

Նմանատիպ ձևով ներկայացված են նաև մյուս հարցերի պատասխանների բաշխումը: «Կոբո» համակարգում դրանք կարելի է գտնել Reports բաժնում:

Խաչաձև աղյուսակները թույլ են տալիս պատասխանների վերլուծությունները ներկայացնել խաչաձև՝ ըստ երկու կամ ավելի հարցերի բաշխման: Օրինակ, տեղեկատվության աղբյուրների վերաբերյալ հարցը դիտարկել ըստ տարբեր բնակավայրերի, սեռերի կամ տարիքային խմբերի հարցվողների պատասխանների: Ստորև ներկայացված է խաչաձև աղյուսակի օրինակ, որտեղ տեղեկացվածության գնահատականի վերաբերյալ պատասխանները բաշխված են ըստ տարիքային խմբերի՝ յուրաքանչյուր տարիքային խմբի ներսում ցույց տալով տեղեկացվածության գնահատականների տոկոսային բաշխումը:

Որքանո՞վ եք տեղեկացված համայնքապետարանի աշխատանքի և ծրագրերի մասին:	*Ձեր տարիքը*			**Ընդամենը**
	16-20 տարեկան	21-25 տարեկան	26-30 տարեկան	
Ամենևին տեղեկացված չեմ	15.8%	16.7%	25.0%	17.3%
Որոշ չափով տեղեկացված եմ	60.5%	83.3%	62.5%	63.5%
Հիմնականում տեղեկացված եմ	18.4%	0.0%	0.0%	13.5%
Շատ լավ տեղեկացված եմ	5.3%	0.0%	12.5%	5.8%
Ընդամենը	**100.0%**	**100.0%**	**100.0%**	**100.0%**

Խաչաձև աղյուսակների ստացման համար անհրաժեշտ է տվյալները մշակել Էքսել կամ տվյալների վիճակագրական մշակման որևէ այլ ծրագրում, որի համար անհրաժեշտ է ներգրավել մասնագետի:

«Կոբո» հարթակից օգտվելու դեպքում տվյալները կարելի է ներբեռնել նաև այլ

ձևաչափերով, օրինակ՝ csv, spss և այլն, որոնք ավելի բարդ, խորքային վերլուծության հնարավորություն են տալիս և կարող են օգտագործվել մասնագետների կողմից:



ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հարցման արդյունքները ամփոփելուց հետո անհրաժեշտ է մշտադիտարկման արդյունքների համառոտ զեկույց պատրաստել՝ ստացած տվյալները աղյուսակների, գրաֆիկների և տեքստային տեսքով ներկայացնելու նպատակով:

Զեկույցի կառուցվածքը կարող է ներառել հետևյալ բաժինները.

1. **Ներածություն**, որտեղ կներկայացվեն մշտադիտարկման նպատակը, ժամանակաշրջանը, ստացած պատասխանների քանակը և այլն.
2. **Ամփոփագիր,** որտեղ ամփոփ կերպով կշարադրվի մշտադիտարկման մասին ինֆորմացիան, ցանկալի է՝ այն տեսական շրջանակը, որի վրա հիմնված է մշտադիտարկումը (տվյալ դեպքում՝ երիտասարդների դրական զարգացման մոտեցումը), հիմնական բացահայտումները, եզրահանգումները և առաջարկները.
3. **Մեթոդաբանություն,** որտեղ կնկարագրվեն իրականացված աշխատանքները, հարցման տարածման մեթոդները, հարցվողների քանակը և հիմնական նկարագիրը.

4. **Հիմնական բացահայտումներ,** որտեղ կդիտարկվեն մշտադիտարկման բոլոր կամ առավել առաջնային հարցերից ստացած տվյալները՝ թվային և կամ գրաֆիկական տեսքով, ըստ երիտասարդների դրական զարգացման տիրույթների.
5. **Եզրահանգումներ** և առաջարկություններ, որոնք ուղղված են շահագրգիռ կողմերին բխում են ստացած արդյունքներից:

Զեկույցը կարող է ներառել նաև հավելվածներ՝ պատասխանների գրաֆիկական պատկերմամբ, հարցաթերթի օրինակով և այլ լրացուցիչ նյութերով:

Ցանկալի է զեկույցը ներկայացնել հնարավորինս համառոտ և լսարանի համար մատչելի լեզվով, իսկ սոցիալական ցանցերում և տարբեր հարթակներում մշտադիտարկման արդյունքները ներկայացնելու համար կարելի է պատրաստել մեկ-երկու էջանոց համառոտ նյութ, օրինակ ինֆոգրաֆիկի տեսքով, որտեղ կարտացոլվեն մշտադիտարկման առանցքային կամ առավել հետաքրքրական տվյալները և եզրահանգումները:

Ստորև որպես համառոտ նյութի օրինակ ներկայացված են որոշ տվյալներ պիլոտային հարցման արդյունքներից:

Գծապատկեր 1. Որո՞նք են Ձեր խոշորացված համայնքում (Մարտունի) որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության հիմնական խոչընդոտները:
(բազմակի պատասխանների հնարավորությամբ, պատասխանների քանակ, N=52)



Որպես մասնակցության հիմնական խոչընդոտ՝ Մարտունի համայնքի երիտասարդ-ները առավել հաճախ նշել են հետաքրքրության ու մոտիվացիայի պակասը: Կարևոր դեր են խաղում նաև անվստահությունը մասնակցության արդյունքի նկատմամբ, մեծերի կողմից աջակցության պակասը եւ մասնակցության ձեւերի մասին գիտելիքի պակասը:

Գծապատկեր 2. Վերջին 12 ամսվա ընթացքում հետևյալ ո՞ր միջոցառումներին եք մասնակցել Ձեր խոշորացված համայնքում (Գորիս):
(բազմակի պատասխանների հնարավորությամբ, պատասխանների քանակ, N=67)



- Երիտասարդների գրեթե կեսը վերջին տարվա ընթացքում մասնակցել է երիտասարդների համար կազմակերպված միջոցառումներին:
- Հաճախակի է մասնակցությունը նաև հանրային քննարկումներին եւ համայնքային ժողովներին, կամավորական ակցիաներին:
- Մյուս միջոցառումներին մասնակցության մակարդակը շատ ցածր է եղել՝ այլ տարբերակներ են նշել 1-ից 5 հոգի:
- Երիտասարդներից 20-ը կամ հարցվածների մոտ 30 տոկոսը որեւէ միջոցառմանը չեն մասնակցել:

ԳՈՐԻՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՈՏ ԿԵՍԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ, ՄՅՈՒՍՆԵՐԸ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԵՆ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ԴԵՄԱՌԴԵՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Գծապատկեր 3. Վերջին 12 ամսվա ընթացքում ձեր համայնքի (Գորիս) համայնքապետարանի ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու համար ո՞ր միջոցներն եք օգտագործել:
(բազմակի պատասխանների հնարավորությամբ, պատասխանների քանակ, N=67)



Գծապատկեր 4. Ըստ Ձեզ՝ երիտասարդները ինչպիսի՞ ազդեցություն են ունենում համայնքում որոշումների կայացման վրա



Մարտունի համայնքի երիտասարդները Գորիսի երիտասարդների համեմատ ավելի հաճախ են նշել, որ երիտասարդները զգալի ու նշանակալի ազդեցություն են ունենում համայնքում որոշումների կայացման վրա: Գորիսում առավել հաճախ ընտրված պատասխանը՝ որոշակի, բայց ոչ բավարար ազդեցություն ունենալու մասին է:

Հավելված 1. Համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության բարելավում. Փոփոխության տեսության օրինակելի ձև

	ԵԴՋ տիրույթներ	Կատարողական ցուցանիշներ	Չափանիշներ, ըստ որոնց կարելի է տարանջատել տվյալները	Տվյալների հավաքագրման աղբյուրներ
O. Երիտասարդները և մեծահասակները մասնակցում են համայնքում որոշումնե-րի կայացմանը, երբ երիտասարդների գաղափարները, տեսակետները, առաջնորդությունը, հմտություններն ու ուժեղ կողմերը գնահատվում են և արտացոլվում համայնքին վերաբե-րող որոշումներում:	Բոլոր չորս ԵԴՋ տիրույթները	O.1. Քաղաքականություն-ների և օրենսդրական փաստաթղթերի քա-նակը, որոնք տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) մշակել են երիտասարդ-ների մասնակցությամբ Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X O.2. Համայնքի ավագա-նու նիստերին մասնակ-ցած երիտասարդների թիվը Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X O.3. Երիտասարդների տեղեկացվածության մակարդակը իրենց համայնքում որոշումների կայացմանը մասնակցելու մեխանիզմների վերաբերյալ Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X% O.4. Մասնակցությամբ բավարարվածության մակարդակը՝ երիտասարդները որքանով են բավարարված համայնքում որոշումների կայացմանը մասնակցելու իրենց փորձից Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X%	Սեռ, տարիք, հաշման-դամության կարգա-վիճակ, խոցելիության այլ հատկանիշներ (օրինակ՝ էթնիկ փոքրամասնություններ, տնային տնտեսության եկամուտներ, փախս-տականներ, ներգաղ-թյալներ, ներքին տեղահանվածներ, մեկ անդամով տնային տնտեսություններ)	O.1. - O.2. Տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետ-վություններ O.3.-O.4. Համայնքում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վերաբերյալ հարցում երիտասարդների շրջանում, որը կարող է կազմակերպել ՏԻՄ-ը կամ պատվիրակել քաղաքացիական հասարակության կազմակերպություն-ներին (ՔՀԿ) և մասնավոր դերակատարներին

Կարճա- և միջնաժամկետ արդյունք 1: Երիտասարդները զարգացրել են որոշումներ կայացնելու գործընթացներում ներգրավվելու կարողություն, ներառյալ խնդիրը բացահայտելու, հետազոտելու և սահմանելու, բազմաթիվ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը քննադատաբար գնահատելու, ողջամիտ եզրահանգումների հասնելու նպատակով տարբեր այլընտրանքներ գնահատելու և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունները:	*ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ* - Վեհ/հարուստ/լայն/ (Higher-order thinking) մտածողության հմտություններ - Միջանձնային հմտություններ (սոցիալական և հաղորդակցման հմտություններ)	1.1. Վերապատրաստման ծրագրերին մասնակցած երիտասարդների տոկոսը, ովքեր զարգացրել են հանրային քաղաքականության հետազոտություններ իրականացնելու, ապացուցահեն քաղաքականություն մշակելու, տեղեկատվության քննադատական գնահատման, խնդրի սահմանման և լուծումների մշակման, արդյունավետ հաղորդակցության իրենց կարողությունները Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X% 1.2. Վերլուծական և քաղաքականության հետազոտություններ իրականացնելու, տեղեկատվության քննադատական գնահատման, խնդրի սահմանման և լուծումների մշակման, արդյունավետ հաղորդակցության վերաբերյալ դասընթացների քանակը, որոնք հասանելի են համայնքում ինչպես դեռառդեմ, այնպես էլ առցանց ձևաչափերով Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X 1.3. Համայնքի երիտասարդների տոկոսը, որը մասնակցել է համապատասխան դասընթացների Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X%	Սեռ, տարիք, հաշմանդամության կարգավիճակ, խոցելիության այլ հատկանիշներ (օրինակ՝ էթնիկ փոքրամասնություններ, տնային տնտեսության եկամուտներ, փախստականներ, ներգաղթյալներ, ներքին տեղահանվածներ, մեկ անդամով տնային տնտեսություններ)	1.1. Հարցում ՔՀԿ-ների և ՏԻՄ մասնակցությամբ 1.2. ՔՀԿ և ՏԻՄ հաշվետվություններ 1.2 -1.3. Համապատասխան ծրագիր իրականացնող կառույցի կողմից նախնական և հետծրագրային հարցումներ/թերտեր Տվյալների ագրեգացիան կարող է կատարել տեղական ինքնակառավարման մարմինը կամ այն պատվիրակել ՔՀԿ-ի

Կարճա- և միջնաժամ-կետ արդյունք 2: Երիտասարդները ներգրավված են ոչ ֆորմալ կրթության մեջ, երիտասարդական և կամավորական աշխատանքներում աշակերտական և ուսանողական խորհուրդների, երիտասարդական կենտրոնների և երիտասարդական կազմակերպու-թյունների միջոցով:	ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆ - Առաջ պլանավո-րելու ունակություն/ նպա-տակ դնելու ունակություն - Դրական ինքնու-թյուն	2.1. Համայնքում երիտասարդների թիվը/%-ը, ովքեր առնվազն տարին մեկ անգամ զբաղվում են կամավորությամբ Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X% 2.2. Համայնքի երիտասարդների թիվը/%-ը, ովքեր վերջին տարվա ընթացքում մասնակցել են համայն-քում ՔՀԿ-ի կողմից իրականացված ծրագրի Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X% 2.3. Համայնքի երիտասարդների թիվը/%-ը, ովքեր վերջին տարվա ընթացքում մասնակցել են համայնքային երիտասարդական կենտրոնի կողմից իրականացված ծրագրի Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X%	Սեռ, տարիք, հաշմանդամության կարգավիճակ, խոցելիության այլ հատկանիշներ (օրինակ՝ էթնիկ փոքրամասնություններ, տնային տնտեսության եկամուտներ, փախստականներ, ներգաղթյալներ, ներքին տեղահանվածներ, մեկ անդամով տնային տնտեսություններ)	2.1-2.2.ՏԻՄ և ՔՀԿ հաշվետվություններ 2.3. Երիտասարդական կենտրոնի հաշվետվություններ

Կարճա- և միջնաժամկետ արդյունք 3: Երիտասարդները ներկայացված են համայնքային ՔՀԿ-ներում, տեղական ինքնակառավարման մարմիններում և բովանդակալից մասնակցում են հանրային միջոցառումներին և տեղական ընտրություններին:	ՆԵՐԴՐՈՒՄ - Երիտասարդնե-րի ներգրավվա-ծություն	3.1. ՏԻՄ ընտրություններում երիտասարդ թեկնածուների թիվը/% Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X% 3.2. ՏԻՄ ընտրություններին մասնակցած երիտասարդ ընտրողների թիվը/%-ը Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X% Թիրախ՝ 2030թ.՝ X% 3.3. Երիտասարդների թիվը տեղական ինքնակառավարման մարմիններում, ներառյալ աշխատակազմը և ավագանին Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X 3.4. Խորհրդի նիստերին և համայնքի զարգացման հնգամյա ծրագրի մշակմանը մասնակցած երիտասարդների թիվը Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X 3.5. Երիտասարդների թիվը, որոնք հրավիրվել են ՏԻՄ կողմից՝ մասնակցելու համայնքային մակարդակով որոշումների կայացմանը, օրինակ՝ 5-ամյա զարգացման ծրագրի կամ այլ համայնքային ծրագրերի մշակմանը Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X	Սեռ, տարիք, հաշմանդամության կարգավիճակ, խոցելիության այլ հատկանիշներ (օրինակ՝ էթնիկ փոքրամասնություններ, տնային տնտեսության եկամուտներ, փախստականներ, ներգաղթյալներ, ներքին տեղահանվածներ, մեկ անդամով տնային տնտեսություններ)	3.1.-3.2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվետվություններ 3.3.-3.5. ՏԻՄ պաշտոնական կայք և հաշվետվություններ

Կարճա- և միջնաժամկետ արդյունք 4: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրերում երիտասարդները դիտարկվում են որպես առանձին խումբ, և համայնքում հասա-նելի են երիտասարդակենտրոն համայնքային ծառայություններ:	ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ - Երիտասարդներին բարյացակամ քաղաքակա-նություն - Երիտասարդներին արձագանքող ծառայություններ -Ներառում/ներգրավում	4.1. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում ներառված այն նախաձեռնությունների/ծրագրերի թիվը, որոնք ուղղված են համայնքում որոշումների կայացմանը երիտասարդների մասնակցության բարելավմանը Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X 4.2. Երիտասարդների թիվը/%-ը, ովքեր մասնակցել են երիտասարդական կենտրոնի այն ծրագրերին, որոնք երիտասարդներին նախապատրաստում են արդյունավետորեն մասնակցելու որոշումների կայացմանը Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X 4.3. Սոցիալապես խոցելի խմբերի երիտասարդների թիվը/%-ը, ովքեր մասնակցել են երիտասարդական կենտրոնի այն ծրագրերին, որոնք երիտասարդներին նախապատրաստում են արդյունավետորեն մասնակցելու որոշումների կայացմանը Մինչ փոփոխությունը՝ 2025թ.՝ X Թիրախ՝ 2030թ.՝ X	Սեռ, տարիք, հաշմանդամության կարգավիճակ, խոցելիության այլ հատկանիշներ (օրինակ՝ էթնիկ փոքրամասնություններ, տնային տնտեսության եկամուտներ, փախստականներ, ներգաղթյալներ, ներքին տեղահանվածներ, մեկ անդամով տնային տնտեսություններ)	4.1. Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր 4.2-4.3. Համայնքի երիտասարդական կենտրոնի հաշվետվություններ, ԿԳՄՍՆ տարեկան հաշվետվություններ

Հավելված 2. Հարցաթերթի օրինակ

Ստորև ներկայացված է մշտադիտարկման հարցաթերթի օրինակը, ներառյալ՝ հղումը, որը կարելի է օգտագործել KoboToolbox հարթակում վերբեռնելու համար:
https://t.ly/d4Kah

Համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության մշտադիտարկում

Առցանց հարցաթերթ

Ներածություն

Շնորհակալություն ենք հայտնում հարցմանը մասնակցելու Ձեր պատրաստակամության համար: Այս հարցման նպատակն է մշտադիտարկել (*համայնքի անունը*) համայնքում երիտասարդների մասնակցության իրավիճակը, առկա խնդիրները ու հնարավորությունները: Հարցման արդյունքները կօգտագործվեն որոշումների կայացման մեջ երիտասարդների մասնակցության բարելավման վերաբերյալ համայնքապետարանին առաջարկներ մշակելու համար:

Հարցումն իրականացվում է (*համայնքապետարանի կամ կազմակերպության անվանումը*) կողմից:

Հարցմանը կարող են մասնակցել 16-30 տարեկան երիտասարդներ, որոնք տվյալ համայնքում (*կամ դրա կազմում ներկայումս ներառված բնակավայրում*) բնակվում են **առնվազն 12 ամիս**: Հարցումը **նախատեսված չէ** համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակիցների համար:

Հարցումն անանուն է՝ բոլոր պատասխանները ընդհանրական ձևով կամփոփվեն մշտադիտարկման զեկույցում: Հարցման արդյունքները չեն փոխանցվում որևէ այլ կողմի: Հարցաթերթի լրացումը Ձեզանից կպահանջի մոտ 10-15 րոպե: Ձեր անկեղծ և մանրամասն պատասխանները կօգնեն մեզ առավել լիարժեք պատկերացում ստանալ երիտասարդների մասնակցության վերաբերյալ և արդյունավետ առաջարկներ մշակել իրավիճակի բարելավման ուղղությամբ: Ցանկացած պահի Դուք կարող եք ընդհատել Ձեր մասնակցությունը:

Հարցումը բաց է լրացման համար մինչև (*նշել պատասխանների հավաքագրման վերջնաժամկետը*):

Կանխավ շնորհակալ ենք Ձեր մասնակցության և համագործակցության համար:

Հարցաթերթը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ) կողմից՝ «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում:

Խնդրում ենք նշել Ձեր մարզը

1. Խնդրում ենք նշել Ձեր համայնքը:

2. Խնդրում ենք նշել Ձեր բնակավայրը:

3. Խնդրում ենք նշել Ձեր տարիքը.

1) 16-20 տարեկան

2) 21-25 տարեկան

3) 26-30 տարեկան

Բաժին 1

Որոշումների կայացմանը մասնակցության վերաբերյալ իրազեկվածություն

4. Որտեղի՞ց եք տեղեկանում համայնքապետարանի աշխատանքի և ծրագրերի մասին *(նշել բոլոր կիրառելի տարբերակները):*

1) Համայնքապետարանի կայք

2) Համայնքապետարանի սոցիալական ցանցերի էջեր (ֆեյսբուք, ինստագրամ և այլն)

3) Համայնքապետարանի կողմից հայտարարությունների տախտակին փակցված նյութեր

4) Համայնքապետարանի

5) Լրատվամիջոցներ (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր, լրատվական կայքեր)

6) Համայնքային երիտասարդական կենտրոն, հասարակական կազմակերպություններ, համայնքային միջոցառումներ

7) Հարևաններ, ընկերներ, ընտանիքի անդամներ

8) Կրթական հաստատություն

9) Աշխատավայր

10) Այլ (նշել)

5. Որքանո՞վ եք տեղեկացված համայնքապետարանի աշխատանքի և ծրագրերի մասին:

1) Ամենևին տեղեկացված չեմ:
2) Որոշ չափով տեղեկացված եմ:
3) Հիմնականում տեղեկացված եմ:
4) Շատ լավ տեղեկացված եմ:

Որոշում կայացնողների հետ հաղորդակցության միջոցներ

6. Վերջին 12 ամսվա ընթացքում Ձեր համայնքի համայնքապետարանի ներկայացուցիչների հետ հաղորդակցվելու համար ո՞ր միջոցներ եք օգտագործել *(նշել բոլոր կիրառելի տարբերակները):*

1) Դեմառդեմ հանդիպում
2) Հանրային միջոցառումներ
3) Հեռախոսային կապ
4) Թղթային նամակներ կամ դիմումներ
5) Սոցիալական մեդիայում (օրինակ ֆեյսբուքում) թողած մեկնաբանություն կամ հաղորդագրություն
6) Էլեկտրոնային նամակագրություն (e-mail, e-request հարթակ, համայնքային կայք և այլն)
7) Չեմ հաղորդակցվել
8) Այլ (նշել)

7. Ինչպե՞ս կգնահատեք համայնքապետարանի ներկայացուցիչների հասանելիությունը՝ նրանց հետ կապ հաստատելու և խնդիրներ կամ առաջարկներ ներկայացնելու առումով:

1) Ամենևին հասանելի չեն:
2) Որոշ չափով հասանելի են:
3) Հիմնականում հասանելի են:
4) Լիովին հասանելի են:
5) Դժվարանում եմ պատասխանել:

Մասնակցության համար անհրաժեշտ կարողությունների և գիտելիքների առկայություն

8. Արդյոք ունե՞ք նման փորձ *(նշում կատարել յուրաքանչյուր տողի համար):*

Դատողություն	Այո	Ոչ	Դժվարանում եմ պատասխանել
1) Ես մասնակցել եմ երիտասարդների մասնակցության թեմաներով դասընթացների, ծրագրերի			
2) Ես տեղյակ եմ, թե ինչպես երիտասարդները կարող են ներգրավվել իմ համայնքի խնդիրների և լուծումների վերաբերյալ որոշումների կայացման մեջ:			
3) Ես կարողանում եմ գտնել և միանալ իմ համայնքի խնդիրների շուրջ մտահոգված երիտասարդների նախաձեռնություններին			
4) Ես կարող եմ համախմբել երիտասարդներին՝ համայնքային որևէ խնդրի լուծման շուրջ			

Մասնակցություն համայնքային միջոցառումներին, համայնքային կազմակերպությունների աշխատանքիներին

9. Վերջին 12 ամսվա ընթացքում հետևյալ ո՞ր միջոցառումներին եք մասնակցել Ձեր խոշորացված համայնքում *(նշել բոլոր կիրառելի տարբերակները):*

1) Հանրային լսումներ, քննարկումներ, համայնքային ժողովներ, բաց դռների օր

2) Համայնքի ավագանու նիստ

3) Համայնքապետարանի կողմից նախաձեռնված հարցումներ, ֆոկուս խմբեր, որևէ հարցի շուրջ գրավոր առաջարկների հավաքագրում

4) Համայնքապետին կից խորհրդակցական մարմնի (հանձնաժողով, խորհուրդ, աշխատանքային խումբ) հանդիպումներ

5) Երիտասարդների համար միջոցառումներ (փառատոն, քննարկում, համաժողով և այլն)
6) Հանրահավաքներ, ցույցեր, ստորագրահավաք
7) Կամավորական ակցիաներ (շաբաթօրյակ, ծառատունկ և այլն)
8) Առցանց հարթակներում (օրինակ՝ ֆեյսբուքում) կազմակերպված համայնքային ակցիա
9) Ոչ մի միջոցառման չեմ մասնակցել
10) Այլ

10. Վերջին 12 ամսվա ընթացքում ստորև թվարկված ո՞ր կազմակերպությունների միջոցառումներին կամ աշխատանքներին եք մասնակցել *(նշել բոլոր կիրառելի տարբերակները)*:

1. Երիտասարդական կամ այլ համայնքային ակտիվ խումբ, նախաձեռնություն, ակումբ
2. Հասարակական կազմակերպություն
3. Համայնքային երիտասարդական կենտրոն
4. Համայնքապետին կից երիտասարդական խորհուրդ
5. Քաղաքական որևէ կուսակցություն (կամ կուսակցության երիտասարդական թև)
6. Հայ առաքելական եկեղեցու թեմին կից կազմակերպություն
7. Աշակերտական կամ ուսանողական խորհուրդ
8. Չեմ մասնակցել
9. Այլ (նշել)

10.1. Վերջին 12 ամսվա ընթացքում մասնակցել եմ թվարկված կազմակերպությունների/կառույցների աշխատանքներին, որպես **Նշել բոլոր կիրառելի տարբերակները*

1. Միջոցառման մասնակից
2. Միջոցառման կազմակերպչական թիմում որպես կամավոր
3. Խորհրդի անդամ
4. Ղեկավար անձ / կազմակերպիչ

11. Որքանո՞վ եք բավարարված Ձեր մասնակցությամբ համայնքում որոշումների կայացման գործընթացներում:

1) Բավարարված չեմ:
2) Որոշ չափով բավարարված եմ:
3) Հիմնականում բավարարված եմ:
4) Լիովին բավարարված եմ:
5) Դժվարանում եմ պատասխանել:

Մասնակցություն ընտրություններին/ ներգրավում ՏԻՄ աշխատանքներում

12. Ստորև նշվածներից ո՞րն է համապատասխանում Ձեր փորձին *(նշել բոլոր կիրառելի տարբերակները):*

1) Մասնակցել եմ տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) և կամ խորհրդարանական ընտրություններին՝ որպես ընտրող:
2) Մասնակցել եմ ՏԻՄ և կամ խորհրդարանական ընտրություններին՝ որպես թեկնածու
3) Մասնակցել եմ ՏԻՄ և կամ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավին:
4) Մասնակցել եմ ՏԻՄ և կամ խորհրդարանական ընտրություններին՝ որպես դիտորդ,
   հանձնաժողովի անդամ կամ քարտուղար:
5) Եղել եմ որևէ համայնքի ավագանու անդամ:
6) Աշխատել կամ աշխատում եմ որևէ համայնքի համայնքապետարանի աշխատակազմում՝ որպես անձնակազմի անդամ:
7) Աշխատել կամ աշխատում եմ որևէ համայնքի համայնքապետարանի աշխատակազմում՝ որպես կամավոր կամ փորձնակ:
8) Թվարկվածներից որևէ փորձ չունեմ:

Երիտասարդների մասնակցության հնարավորությունները և խոչընդոտները

13. Արդյո՞ք Ձեր համայնքում առկա են երիտասարդների մասնակցության հետևյալ հնարավորությունները (նշում կատարել յուրաքանչյուր տողի համար):

	Այո	Ոչ
1) Տեղեկատվություն ստանալ համայնքում առկա ծրագրերի, ընդունվող որոշումների մասին		
2) Համայնքապետարանի ներկայացուցիչների հետ հաղորդակցվել		
3) Համայնքապետարանում տեղի ունեցող հանրային միջոցառումներին մասնակցել		
4) Համայնքապետարանի ներկայացուցիչներին համայնքի խնդիրների լուծման, համայնքի զարգացման ուղղությամբ առաջարկներ ներկայացնել		
5) Ներկայացված առաջարկներին ի պատասխան՝ համայնքապետարանի ներկայացուցիչներից հետադարձ կապ ստանալ		
6) Առաջարկների կամ գաղափարների իրականացման համար համայնքապետարանի կողմից աջակցություն ստանալ		
7) Համայնքապետարանի ներկայացուցիչների հետ համայնքի խնդիրների լուծման, համայնքի զարգացման ուղղությամբ համատեղ աշխատանք իրականացնել		
8) Խոցելի խմբերի, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնությունների համար մասնակցություն ապահովել		
9) Հնարավորություններ չկան:		

13.1. Ընդհանուր առմամբ, առկա հնարավորությունները որքանո՞վ են բավարար երիտասարդների որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու համար:

1. Բավարարար չեն:
2. Որոշ չափով բավարարար են:
3. Հիմնականում բավարար են:
4. Լիովին բավարարար են:
5. Դժվարանում եմ պատասխանել:

14. Ըստ Ձեզ՝ Ձեր համայնքի երիտասարդներն ինչպիսի՞ ազդեցություն են ունենում համայնքում որոշումների կայացման վրա:

1) Ոչ մի ազդեցություն չեն ունենում:

2) Որոշակի ազդեցություն ունենում են, բայց ոչ բավարար:

3) Բավականաչափ ազդեցություն են ունենում:

4) Զգալի և նշանակալի ազդեցություն են ունենում:

5) Այլ (նշել)

15. Որո՞նք են Ձեր խոշորացված համայնքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության հիմնական խոչընդոտները *(Նշեք առավելագույնը 5 տարբերակ)*

1) Երիտասարդները չգիտեն, թե ինչպես կարող են մասնակցել:

2) Երիտասարդները չունեն մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիք ու կարողություն:

3) Երիտասարդները չունեն բավարար հետաքրքրություն և մոտիվացիա:

4) Երիտասարդները բավարար ժամանակ չունեն մասնակցության համար:

5) Երիտասարդները չեն կարողանում համախմբվել որևէ հարցի շուրջ:

6) Երիտասարդները վստահ չեն, որ իրենց մասնակցությունը իմաստ կամ արդյունք կունենա:

7) Երիտասարդների համար չկան կարծիք արտահայտելու, խնդիրները բարձրաձայնելու, մասնակցելու համար հասանելի կամ իրենց կարիքներին համապատասխանող հարթակներ, հնարավորություններ:

8) Երիտասարդները չեն վստահում համայնքային կառույցներին և կամ կազմակերպություններին:

9) Երիտասարդները բավարար աջակցություն, ուղղորդում և կամ խրախուսում չեն ստանում մեծերի կողմից:

10) Համայնքում չկան համապատասխան ենթակառուցվածքներ (օր.՝ տրանսպորտ, ճանապարհ, լուսավորություն և այլն):

11) Որոշում կայացնողները լուրջ չեն ընդունում կամ անտեսում են երիտասարդների ձայնը:

12) Ընտանիքի անդամները կամ մեծերը խոչընդոտում կամ արգելում են երիտասարդներին մասնակցել համայնքային հարցերի լուծմանը կամ իրենց կարծիքը արտահայտել:

16. Ձեր համայնքում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցությունը խթանելու համար ի՞նչ միջոցառումներ կամ գործողություններ կառաջարկեիք:

Ժողովրդագրական տվյալներ

17. Ձեր սեռը.

1) Արական
2) Իգական
3) Չեմ ցանկանում նշել

18. Ձեր ազգությունը.

1) Հայ
2) Եզդի
3) Ռուս
4) Ասորի
5) Քուրդ
6) Ուկրաինացի
7) Հույն
8) Վրացի
9) Այլ

19. Ձեր կրթությունը (նշեք Ձեր ստացած կրթության ամենաբարձր մակարդակը).

1) Հիմնական (1-9 դասարաններ)
2) Միջնակարգ (1-12 դասարաններ)
3) Միջին մասնագիտական կրթություն (արհեստագործական-տեխնիկական քոլեջներ)
4) Բարձրագույն կրթություն
5) Հետբուհական կրթություն
6) Այլ

20. Ձեր ընտանեկան կարգավիճակը.

1) Ամուսնացած

2) Չամուսնացած

3) Ամուսնալուծված

4) Այրի

5) Չեմ ցանկանում նշել

21. Ունե՞ք առողջական խնդիրներ կամ այլ հատուկ կարիքներ (օրինակ՝ հաշմանդամություն), որոնք ազդում են Ձեր առօրյա կյանքի վրա:

1) Այո

2) Ոչ

22. Ձեր զբաղմունքը (նշել բոլոր կիրառելի տարբերակները).

1) Սովորող/ուսանող

2) Աշխատում եմ

3) Ինքնազբաղված եմ (այդ թվում՝ գյուղատնտեսական աշխատանքներ)

4) Չեմ սովորում և չեմ աշխատում

5) Այլ (նշել)

23. Նշված իրավիճակներից ո՞րն է առավել համապատասխանում Ձեր ընտանիքի տնտեսական վիճակին:

1) Գումարը բավարար չէ սննդի և կոմունալ վճարումների համար:

2) Գումարը բավարար է սննդի և կոմունալ վճարումների, բայց ոչ հագուստ գնելու համար:

3) Գումարը բավարար է սննդի և հագուստի համար, բայց ոչ թանկարժեք ապրանքների կամ ծառայությունների համար (ավտոմեքենա, հանգիստ արտերկրում և այլն):

4) Մենք՝ կարող ենք գնել այնպիսի թանկարժեք ապրանքներ կամ ծառայություններ, ինչպիսիք են ավտոմեքենան կամ հանգիստը արտերկրում:

5) Մենք կարող ենք գնել ամեն ինչ, ինչ կցանկանանք:

24. Որտեղի՞ց եք տեղեկացել այս հարցման մասին և կամ ստացել հարցման հղումը:

1) Համայնքապետարանի կայքից
2) Համայնքապետարանի սոցիալական ցանցերի էջերից (ֆեյսբուք, ինստագրամ և այլն)
3) Համայնքապետարանից ստացած էլեկտրոնային նամակից
4) Համայնքային երիտասարդական կենտրոնից կամ հասարակական կազմակերպություններից
5) Ընկերներից, դասընկերներից, գործընկերներից (այդ թվում՝ սոցիալական ցանցերում նրանց հրապարակումներից)
6) Այլ (նշել)

25. Այլ դիտարկումներ կամ առաջարկներ հարցաթերթի վերաբերյալ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

www.armcivics.am